ՀԱԿՈԲ ԱՂԱԲԱԲ - 145

# ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՉՄԱՏՆԵՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԻՆ



***Անվանի մանկագիր, մանկավարժ, հասարակական գործիչ Հակոբ Աղաբաբի 145-ամյակին նվիրված սույն հրապարակումը պատշաճ առիթ է հիշելու հանիրավի մոռացության մատնված վիրահայ գրողի հայ մանկագրության մեջ ներդրած ավանդը:***

Սովորաբար, մանկական ոտանավորների պարզ ու զվարճալի տողերը մեզ հեշտ գրվածքներ են թվում, այնքան հստակ են նրանցում կյանքի ճշմարտությունները, որ թվում է, թե մեզանից յուրաքանչյուրը, ցանկացած նման ճշմարտություն կարող է դարձնել ոտանավոր կամ պատմվածք: Այլ է, սակայն, մանկագրություն ստեղծող Մեծերի կարծիքները.

«Հեքիաթի մասին դեռ պարզ հասկացողություն չունեն: Կարծում են՝ դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»,- Հովհաննես Թումանյան:

«Երեխաների համար պետք է գրել այնպես, ինչպես մեծերի համար, միայն թե՝ ավելի լավ»,- Լեւ Տոլստոյ:

«Ինքնադրսեւորման համար երեխաները հաճախ են փորձում այս կամ այն կերպարին նմանվել, մինչդեռ մանկական գրականությունից իսպառ վերացել է դրական հերոսի կերպարը: Փոխարենը սերիալների միջոցով առատորեն մանկական աշխարհ են թափանցում մարդկային ազնվագույն հատկություններից զուրկ «կերպարներ», որոնք արատավորում են մանուկ ընթերցողի բնավորութունը, աղավաղում են ա՛յն աշխարհի պատկերները, որի մեջ պիտի ապրեն ու ձեւավորվեն:

Իրականում մարդկանց իդեալներ են պետք»,- ժամանակակից մանկագիր Սուրեն Մուրադյան:

«Գրականության ամենաբարձր արտահայտությանը»՝ մանկագրությանը նվիրվեց նաեւՀակոբ Աղաբաբը(Աղաբաբյան): Ինչպես խոստովանում է իր «Բանաստեղծություններ» ժողովածուի «Ընթերցողներիս» ուղերձում, նա ոչ դյուրին այդ ժանրին դիմեց ներքին անդիմադրելի մղումով՝ հավատարիմ մնալով ավանդական մանկագրության հենց վերը նշված բանաձեւումներին: Եվ այդով հարթելով իր մանկագրության գրավիչ ու մնայուն ճանապարհը բոլոր ժամանակների համար:

… Ղազախի Կողբ գյուղացի Բեժան Հեքիմ-Գեւորգյան Աղաբաբի եւ Նատալյա Հովհաննիսյանի ընտանիքում 1875թ. ծնվում է նրանց առաջին արու զավակը՝ Հակոբը: Ուսումնասեր հայրը, ընտանիքը Թիֆլիս տեղափոխվելուց հետո, 8 տարեկան Հակոբին տալիս է Թիֆլիսի Կուկիո Նորաշենի ծխական մեկդասյա դպրոցը, ապա՝ նույն թաղամասի քաղաքային դպրոցը: Այստեղ, չորս տարվա ուսումնառությունից հետո, հայրը նրան տալիս է Թիֆլիսի Հավլաբար թաղամասի Շամքորեցոց դպրոցը: Բայց, մի քանի օրից, որդին բողոքում է, որ այստեղ նոր բան չեն սովորեցնում, եւ պահանջում է իրեն տանել «Վանքի շկոլը» (Ներսիսյան դպրոցը), ուր աշակերտում են իրեն ընկերները… Մի տարուց հետո, դպրոցի տեսչի օգնական Ամիրան Մանդինյանի միջնորդությամբ, Հակոբը դառնում է Ներսիսյան դպրոցի միանգամից երրորդ դասարանի սան: Լինում է շատ ակտիվ եւ առաջադեմ աշակերտ, ինչի համար էլ, այդ տարիներին Ներսիսյան դպրոցում դասավանդող Պերճ Պռոշյանը Հակոբին անվանում է «դասարանի կարմիր կոճի»:

Աչքաբաց, ուսումնատենչ աշակերտի համբավը շուտով տարածվում է նաեւ դպրոցից դուրս. Հակոբը հրավիրվում է Թիֆլիսում այդ օրերին գործող «Գրագիտության երեկոների» ընկերության ուսուցիչ: Շուտով ընկերությունը նրան հաստատում է «Հավլաբար» թաղամասի «Կիրակնօրյա գրագիտության» դպրոցի ուսուցիչ:

Գրականության բնատուր հակումներով օժտված տղայի մոտ, ինչպես եւ սպասելի էր, գրական աշխարհի որոնումներն սկսվում են արդեն մանկությունից: Դեռ 3-րդ դասարանում օրինակելի ներսիսյանականը, զարմանալի խանդավառությամբ, կազմակերպում է գրական խմբակներ, ցերեկույթներ, մասնակցում է դպրոցի բարձր՝ 6-րդ դասարանցիների «Աստղ առավոտու» ամսագրի հրատարակմանը եւ, քանի որ ուներ գեղեցիկ ձեռագիր, անձամբ հրատարակում է դպրոցական «Ծիածան» եւ «Բողբոջ» թերթերը: Հնարամտությունների շնորհիվ, նա դպրոցի սիրված աշակերտ ու սիրված ընկեր է ճանաչվում թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտության կողմից:

Ընդհանրապես, շրջապատում նրան համարել են պարզ ու հասարակ, ասող-խոսող, կատակասեր ու միաժամանակ խոր իմաստությամբ օժտված անձնավորություն:

Մանկավարժական գործունեությունը առանձնահատուկ դիտողականության եւ ստեղծագործական ուրույն մոտեցումների է հանգեցնում Աղաբաբ մանկագրին: Նրա կերտած մանկական աշխարհը չի սիրում ողբերգականը, այլ գերադասում է հումորը, առասպելը. հեքիաթայինը, խաղերը… Աղաբաբի չափածո եւ արձակ գործերին բնորոշ են մանկական հոգեբանությանը մատչելի ու հետաքրքիր նորությունները, որոնցում բացահայտվում են կյանքի զանազան ճանաչողական եւ մանուկ հոգեաշխարհի կերտմանը նպաստող դաստիարակիչ երեւույթներ: Դրանք սովորեցնում են սիրել ընտանիքը, բնությունը, մարդուն: Եվ մանուկ երեւակայության մեջ անմիջապես տպավորվում են ժողովրդական լեզվից վարպետորեն քաղված բառերով, դարձվածքներով, ժողովրդական մտածողության հմայիչ պարզությամբ: Դրանով են մշտապես գրավել նրա «Չալոյի էշը», «Փահլեւան աքաղաղը», «Այծարած Ղաղոն», «Գյուղի հեռախոսը»,«Հայրենի օջախը», «Իլիկը», «Հարսանքավոր աղվեսը», «Ցմբո-ցմբո» եւ այլ պատմվածքները ու նաեւ չափածո գործերը:

Գրական, մանկավարժական գործունեությանը զուգընթաց Աղաբաբը ներգրավվել է նաեւ ժամանակի կրթամշակութային բազմաբնույթ աշխատանքներում: Նա անձամբ մասնակցել է ընտանեկան, աշակերտական եւ ժողովրդական թատերական ներկայացումների, Հայ ուսուցչական միության ստեղծմանը, եղել է Հայ գրողների միության վերստուգիչ հանձնաժողովի անդամ, Վրաստանի Հայոց թեմի պատգամավորական խորհրդի նախագահության անդամ-քարտուղար: Պարբերաբար թղթակցել է ժամանակի մամուլին՝ «Մշակին» եւ հայկական այլ թերթերի՝ Ալմագ, Նեկտար ստորագրություններով:

Երբ Աղաբաբը հրավիրվում է աշխատելու մանկական «Հասկեր» ամսագրին, ժամանակակիցների վկայությամբ, նա այնպես է տարվում աշխատանքով, որ «Հասկերը» դառնում է նրա գրական գործունեության կենտրոնը: Այնուհետեւ նույն նվիրվածությամբ, որպես խմբագրական կազմի անդամ, աշխատում է նաեւ «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրում:

Հակոբ Աղաբաբի ոտանավորները՝ իբրեւ մանուկների հոգուն հարազատ ու գրավիչ, իրենց տեղն են գրավել այն օրերի «Լուսաբեր», «Դասընկեր» «Փայլուն արեւ» եւ մայրենի լեզվի դասագրքերում: Դրանցից շատերը վերածվել են երգերի՝ կոմպոզիտորներ Ռ.Մելիքյանի, Դ.Ղազարյանի, Ա.Մանուկյանի, Մ.Մազմանյանի, Մ. Միրզոյանի, Ումրշատի կողմից: Իսկ պատմվածքներից երեքը՝ «Թուխսը», «Օգնությունը» եւ «Ճուտիկը» վերածվել են մանկական օպերաների. որոնց լիբրետտոն կազմվել է հեղինակի մասնակցությամբ: Այդ օպերաները բազմիցս բեմադրվել են Թիֆլիսում, Բաքվում, Երեւանում:

Աղաբաբի կենսագրության մեջ հիշվում է նրա ժողովրդականության մի ակնառու վկայություն:

1922թ., Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում տոնվեց Աղաբաբի գրական, մանկավարժական եւ հասարակական 25-ամյա գործունեության հոբելյանը: Հոբելյանի ջերմ մթնոլորտը դրսեւորեց թե՛ աշակերտների, թե՛ հասարակության սերն ու հարգանքը ականավոր մանկագրին, ուսուցիչ-դաստիարակին, հասարակական գործչին:

Փաստին բացառիկ ջերմությամբ իր սրտառուչ ողջույնով արձագանքեց Հովհ. Թումանյանը՝ գրելով՝

«Սիրելի Աղաբաբ,

25-ամյա հոբելյանիդ տոնին համբույր եմ ղրկում քեզ հիվանդությանս անկողնից, ի սրտե ցանկանում եմ, որ հասարակության ու մանուկների հարգանքի եւ համակրության միահամուռ ցույցերը նոր եռանդ տան քեզ նոր թափով նվիրվելու մեր դպրոցական, հասարակական եւ մանուկների գրականության գործին ու ապագայում տոնել ավելի մեծ հոբելյան, ավելի երջանիկ օրերին: Քեզ սիրող՝ Հովհ. Թումանյան, 5 փետրվար, 1922թ. Թիֆլիս»:

Հակոբ Աղաբաբը վախճանվեց 1926թ., 51 տարեկանում: Գրողի աճյունը ամփոփվեց Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում: Նա ունեցավ կյանքի կարճ, սակայն բեղուն ճանապարհ:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ՎՐԱՑԱԿԱՆ ՁԼՄ-ԻՑ

# ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՐԱՎԵՑԻՆ ԱՅՆ ԵՐԵՔ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՄԻՆՉ ԱՅԴ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԷԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ»



***Վերջին օրերին Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ռազմական դիմակայության պատճառների ու կողմերի ենթադրական նպատակների, տեղի ունեցած եւ ընթացիկ իրադարձությունների, Երեւանի եւ Բաքվի մոտեցումների, ինչպես նաեւ այն մասին, թե որքանով է մեծ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ լայնածավալ պատերազմական գործողությունների վերսկսման հավանականությունը, վրացական «Ինտերպրեսնյուս» գործակալությունը զրուցեց Երեւանի գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային հետազոտական կենտրոնի ղեկավար Ստեփան Գրիգորյանի հետ:***

***- Այս օրերին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ռազմական դիմակայության վերաբերյալ միմյանց հակասող տեղեկատվություն է տարածվում: Ռազմական գործողություններ սկսելու մեջ երկու կողմերը միմյանց են մեղադրում: Ձեր կարծիքով, իրականում ի՞նչ է տեղի ունենում, եւ ի՞նչը կարող է լինել տեղի ունեցածի պատճառ:***

- Նախ ասեմ, որ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հերթական դիմակայությունը տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղի սահմանային գոտուց հեռու: Այս անգամ ռազմական գործողությունները տեղի ունեցան Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանագծում՝ Հայաստանի հյուսիսում գտնվող Տավուշի մարզում: Դա նշանակալի հանգամանք է:

Այն մասին, որ Ադրբեջանն առաջինն է սկսել ռազմական գործողությունները, չեմ սկսի ապացուցել, քանի որ ինչպես ճիշտ նշեցիք, նման դեպքերում երկու կողմերը հրադադարի խախտման մեջ մեղադրում են միմյանց, եւ երկու կողմերն էլ տեղի ունեցածը ներկայացնում են բացարձակապես տարբեր ձեւերով:

Ես հիմա կխոսեմ այն մասին, թե ինչու եմ համոզված, որ ռազմական գործողությունները սկսել է ադրբեջանական կողմը: Բանն այն է, որ Արցախի կապակցությամբ ստեղծված ստատուս-քվոն ձեռնտու է Հայաստանին եւ Արցախին: Դա ոչ մեկի համար գաղտնիք չէ: Երեւանի եւ Ստեփանակերտի իշխանությունները լրիվությամբ վերահսկում են Լեռնային Ղարաբաղի իրավիճակը: Մեզ ձեռնտու է, որ ընթացիկ բանակցությունները շարունակվեն թեկուզ հարյուր տարի:

Նման պայմաններում անցանկալի իրավիճակում է հայտնվում ադրբեջանական կողմը: Բաքուն դժգոհ է նրանից, որ բանակցություններն ապարդյուն են անցնում: Մի քանի օր առաջ նախագահ Ալիեւը ԵԱՀԿ-ին մեղադրեց անգործության մեջ: Ինձ համար հասկանալի է, թե ինչու հրադադարի դադարեցման նախաձեռնողը ադրբեջանական կողմն է: Լրիվությամբ գիտակցում եմ Բաքվի դժգոհության եւ զայրույթի պատճառը: Գիտակցում եմ նաեւ, որ նրանք յուրովի են ընկալում Արցախի հիմնախնդիրը: Մենք, ինչպես նաեւ նրանք, համոզված ենք մեր արդարության մեջ, թեեւ փաստ է, որ այս պայմաններում իրավիճակի սրումը իրականացվում է միայն նրանց կողմից:

- ***Իսկ հիմա ի՞նչ եղավ, երբ…***

- Նրանից հետո, երբ Ադրբեջանը սկսեց ռազմական գործողությունները, պատժվեց: Մի քանի բարձունքներից, որ մինչ այդ նրանք վերահսկում էին, դուրս մղվեցին: Բանն այն է, որ Ադրբեջան-Հայաստան սահմանագծի այդ հատվածը ֆիքսած չէ եւ սահմանազատում չի եղել:

Տարբեր տվյալներով, հայկական զորամիավորումները գրավեցին այդ բարձունքները, որոնք նախկինում վերահսկվում էին Ադրբեջանի կողմից: Ընդ որում, դրանցից մեկը շատ նշանակալից բարձունք է: Դա այն բարձունքն է, որտեղից մինչ այդ հաճախ էին հրետակոծվում հայկական գյուղերը: Նշանակալից է նաեւ այն, որ հրադադարի խախտումներ եղել են ինչպես Ղարաբաղում, այնպես էլ՝ Տավուշի մարզում, որը սահմանակից է Վրաստանին: Սակայն տեղի ունեցածը էականորեն տարբերվում է նրանով, որ ադրբեջանական կողմը լուրջ կորուստներ կրեց: Բացի այն, որ նրանք կորցրին բարձունքները, նրանց իսկ տվյալներով, զոհվել է 17 զինծառայող: Մեր տվյալներով, զոհվել է չորս հայ զինծառայող:

***- Որքանո՞վ է մեծ հավանականությունը, որ Ադրբեջան-Հայաստան սահմանագծում տեղական նշանակության դիմակայությունը վերածվի երկրների միջեւ լայնածավալ պատերազմի:***

- Ըստ իս, տեղի ունեցածը լայնածավալ պատերազմի չի հանգեցնի: Դրա պատճառն այն է, որ Ադրբեջանի ագրեսիային տված պատասխանը բավականին հզոր էր: Նման իրավիճակում չեմ կարծում, որ Ադրբեջանը համարձակվի Հայաստանի դեմ ծավալել լայնածավալ ռազմական գործողություններ: Եթե անգամ սկսի, ապա համոզված եմ, որ կունենա է՛լ ավելի լուրջ կորուստներ: Կարծում եմ, որ տեղի ունեցածի իմաստը նրանում էր, որ Հայաստանը հայտնվեր Մերձավոր Արեւելքի ոչ կայուն գոտում: Թուրքիան եւ Ադրբեջանը ձգտում էին, որ Արցախի դիմակայությունը կարգավորվի ոչ թե ԵԱՀԿ Մինսկի խմբի ենթատեքստում, այլ ավելի լայնացված, Մերձավոր Արեւելքի ոչ կայուն գոտու շրջանակներում:

Կրկնում եմ, ինչպես երեւում է, տեղի ունեցածի գլխավոր իմաստը դրանում էր, սակայն նրանից հետո, երբ Հայաստանը խիստ հակահարվածեց, չեմ կարծում, որ տեղի ունեցածն այս տեսանկյունից շարունակություն ունենա:



*ԿՈԲԱ ԲԵՆԴԵԼԻԱՆԻ*
*«ԻՆՏԵՐՊՐԵՍՆՅՈՒՍ»*

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Գ.ՋՈԽԹԱԲԵՐԻՁԵ. «ՑԱՎՈՔ, ԴԱ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է»



*Ուրբաթ օրը՝ հուլիսի 10-ին, Վրաստանի խորհրդարանի ճյուղային էկոնոմիկայի կոմիտեի նիստում, որտեղ քննարկում էին էլեկտրոնային հաղորդակցության վերաբերյալ օրենքում փոփոխությունների փաթեթը, «Մագթիկոմի» հիմնադիր Գիա Ջոխթաբերիձեն իր ելույթում հայտարարեց, որ երկու խոշորագույն միջազգային ընկերություններ Կախի Բեքաուրու նախագահության օրոք, հեռացան Վրաստանից: Դա իրականությո՞ւն է:*

Վրաստանից հեռացած ընկերություններում, որի ստուգման հնարավորությունն ընձեռում է նիստի արձանագրությունը, Գիա Ջոխթաբերիձեն նշեց մետրոմեդիան (այն Վրաստանի շուկայից վերջնականապես դուրս եկավ 2017 թվականին) եւ թելիասոներին (նշենք, որ Վրաստանի շուկայից դուրս է եկել 2018 թվականին) եւ Արավիոնի Վրաստանը («Բիլայնը»), որը Վրաստանից դուրս եկած ընկերությունների շարքում սխալ եւ կեղծ թվարկվում էր հանձնաժողովի նախագահ Կախա Բեքաուրու կողմից: Գիա Ջոխթաբերիձեն «Բիլայնի» կապակցությամբ հայտարարեց, որ ընկերությունը ցանկանում է դուրս գալ Վրաստանից, սակայն «գնորդ չի գտնում»:

Վրաստանի բջջային օպերատորներից, ովքեր բջջային սպասարկումն իրականացնելու համար տնօրինում են անհրաժեշտ հավաստագիրը, մինչեւ 2015 թվականին գործող հավաստագրերի ժամկետի սպառումը, պահանջեցին հավաստագրի սակագնի վճարում, որն իրականացվեց: Դա պատճառներից մեկը դարձավ, որը Վրաստանի խոշորագույն ընկերություններին, մետրոմեդիային ստիպեց միակողմանի եւ ենթադրաբար թելիասոներին եւս թողնել Վրաստանը:

Փաստացի ապացույցները ներկայացված են կոնկրետ նիստի արձանագրությունում:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍ

# ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ «ԱՐՏՈՆՅԱԼ ԱԳՐՈՎԱՐԿԵՐ» ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

*Ագրոգործարարության աջակցության նպատակով, TBC բանկը, բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարության «Արտոնյալ ագրովարկեր» նախագծի շրջանակներում, գինու գործարարության մեջ ներառված անձանց առաջարկում է բարելավված պայմաններ:*




Նախաձեռնության նպատակը գինեգործների աշխատանքի դյուրացումն ու նրանց համար 2020 թվականի բերքահավաքը նախապատրաստված դիմավորելու հնարավորության ընձեռումն է:

Մասնավորապես, «Արտոնյալ ագրովարկեր» նախագծի շրջանակներում, արտադրության վերազինման նպատակով, բարելավված պայմաններով խաղողի վերամշակման արտադրություններին հնարավորություն կտրվի հիմնական միջոցների համաֆինանսավորելու, ինչպես նաեւ շրջանառու միջոցներով խաղող գնելու նպատակով, օգտվել 20 հազարից մինչեւ 15 միլիոն լարի վարկից: Նախագծի նորացված պայմանները նախատեսում են վերոնշյալ հատվածին 48 ամիս ժամկետով տարեկան 11 տոկոս վարկի համաֆինանսավորում, որն ապահովում է գյուղի եւ գյուղատնտեսության ոչ կոմերցիոն հանրային իրավունքի գործակալությունը:

Նորույթ է ներդրված նաեւ թեյի վերամշակման արտադրություններին համաֆինանսավորման ուղղությամբ: Վերոնշյալ ոլորտում ներգրավված արտադրություններին այս տարի առաջին անգամ թեյահումքի ձեռքբերման նպատակով կընձեռվի արտոնյալ ագրովարկից օգտվելու հնարավորություն: Նախագիծը նախատեսում է նաեւ միամյա մշակաբույսերի, թեյի վերամշակման արտադրությունների, գյուղատնտեսական մեխանիզացիայի, բազմամյա այգիների համաֆինանսավորում:

«Արտոնյալ ագրովարկեր» նախագծի բարելավված պայմանների մասին մանրամասն տեղեկատվություն հնարավոր է ստանալ https://www.tbcbank.qe/web/ka/web/quest/agro-credit-better-conditions կայք-էջում:

Հիշեցնենք, որ Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարության կողմից, «Արտոնյալ ագրովարկեր» նախագիծը գործում է 2013 թվականից: Նախագծի նպատակը ֆերմերներին եւ գյուղատնտեսության մեջ ներգրավված արտադրողներին էժան, երկարաժամկետ եւ մատչելի դրամական միջոցներով ապահովումն է, ինչը նպաստում է գյուղատնտեսության նախնական արտադրության, վերամշակման եւ պահպանման-իրացման արտադրական գործընթացների բարելավման խրախուսմանը:

TBC-ն արդեն յոթ տարի է՝ համագործակցում է նախագծի հետ եւ դրա շրջանակներում ֆինանսավորել է ավելի քան 11 հազար ֆերմերի եւ վերամշակող արտադրություն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՊՐԱՆՔԱ-ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

*Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը շարունակում է հանրային ձեւաչափով գործարարների հետ հանդիպումները, որոնց նպատակը ծանոթությունն է նապրանքա-նյութական արժեքների դուրսգրման կարգի մասին Վրաստանի կառավարության ու մասնավոր հատվածի համագործակցության արդյունքում ձեռք բերած որոշման հետ:*



Բաթումիում գրանցված ընկերությունների ներկայացուցիչներին ներկայացվեցին հարկերի վարչարարության նորացված կարգի փոփոխությունները: Հանդիպման շրջանակներում ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային եւ մաքսային մեթոդաբանության դեպարտամենտի պետի տեղակալ Շալվա Կոպալեիշվիլին եւ նույն դեպարտամենտի աշխատակիցները գործարարներին հակիրճ տեղեկատվություն տվեցին վնասված-փչացած ապրանքի դուրսգրման ընթացակարգի մասին, ծավալուն ներկայացրին հատուկ մշակված նախաձեռնությունը եւ պատասխանեցին առաջադրված հարցերին:

**Տեղեկատվություն.** ապրանքների դուրսգրման նոր, դյուրացված նորմերի մասին, մասնավորապես, մինչեւ 100 լարի ապրանքի դուրսգրման դիմումների սակագնից ազատման մասին (Վրաստանի կառավարության թիվ 96 որոշում), հասարակական սննդի օբյեկտների ապրանքների դուրսգրման դյուրացված կարգի մասին (Վրաստանի ֆինանսների նախարարի թիվ 944 հրամանագիր) եւ առեւտրական օբյեկտների պարենային կորուստների մասին (եկամուտների ծառայության պետի թիվ 16117 հրամանագիր) մանրամասները տեղակայված են հետեւյալ կայքերում.

https://matsne.gov.ge/ka/document/view/2800?publication=90

https://matsne.gov.ge/ka/document/view/1167835?publication=110

https://www.rs.ge/common/get_doc.aspx?doc_id=10962

# ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐՈՒՄ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ԱՆԽԱՓԱՆ ԲՆՈՒՅԹ Է ԿՐԵԼՈՒ

*Նոր կորոնավիրուսի (COVID-19) ռիսկի խմբի նպատակային թեստավորման շրջանակներում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության Բաթումիի ձեւակերպման տնտեսական գոտու 110 մաքսային աշխատակիցներ անցան նպատակային թեստավորում: Կորոնավիրուսի ոչ մի վարակակիր չի բացահայտվել:*



Վրաստանի տարածք մուտք գործելիս՝ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության բժիշկ-համաճարակաբանների կողմից անցկացվում է հակագենիզի եւ հակամարմնի նպատակային թեստավորում, անցկացվում է նաեւ միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող տարանցիկ բեռնատարների վարորդների (ինչպես Վրաստանի քաղաքացիների, այնպես էլ՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցողների) թեստավորում:

Վերոնշյալ ընթացակարգերն անցկացվում են մաքսային անցակետերում, ձեւակերպման տնտեսական գոտիներում, նավահանգիստներում եւ մաքսային վերահսկիչ գոտիներում տեղակայված հատուկ բժշկական կետերում, որոնք հագեցված են նոր կորոնավիրուսի (SARS-CoV-2) թեստավորման համար անհրաժեշտ սարքավորումներով:

Ներկա դրությամբ, նպատակային թեստավորում է անցել 33400 վարորդ:

Այն դեպքում, երբ միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների վարորդները խախտում են համաճարակային վերահսկման եւ կարանտինի կարգը, տուգանվում են Վրաստանի օրենսդրությամբ ու սահմանված կարգով:

Հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի համակարգմամբ, թեստավորման լրիվ գործընթացի անցկացումը ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մյուս մաքսային անցակետերում եւ ձեւակերպման տնտեսական գոտիներում մշտական բնույթ է կրում:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐՈՒՅԹ

# ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱԿՑԻԱ «ՖԻՆԿԱ» ԲԱՆԿՈՒՄ




*«Ֆինկա» բանկը վերսկսում է դրամական փոխանցումների ակցիա:*

Սպառողներին տրվում է հունիսի 15-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը ներառյալ, առանց լրացուցիչ հերթագրման եւ սպասումների, դրամական փոխանցումների դյուրին իրականացման եւ ամսական 10, 20, 30, 40, 50 լարիանոց «քեշբեք» ստանալու հնարավորություն:

Թեպետ դրանով ակցիան չի սահմանափակվում՝ սույն եռամսյա ակցիայի ավարտին բանկի 36 սերվիս-կենտրոններից կբացահայտվի 36 ակտիվ սպառող եւ նրանց կհանձնվի 100 լարիանոց դեպոզիտ, իսկ հատուկ մրցանակը՝ 200 լարիանոց դեպոզիտը, կփոխանցվի ամենաակտիվ 10 սպառողի, որ ակցիայի ժամանակահատվածում ամենաշատ միջազգային դրամական փոխանցումներ են իրականացրել:

Օգտվեք «Ֆինկա» բանկի դրամական փոխանցումներից, ցուցաբերեք ակտիվություն եւ ստացեք մրցանակներ:

«Ֆինկա» բանկ՝ առավել օգտավետ ձեր նպատակների համար: Tel: *4949

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԻՆՍԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵԱՏՄ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

*Հուլիսի 17-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում մեկնարկած Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին վարչապետ Նիկոլ Փաշինյանը գոհունակություն հայտնեց Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ, հույս հայտնեց, որ այս ուղղությամբ հետագա կառուցողական աշխատանքներ կարագացվեն անդամ բոլոր պետությունների շահերի փոխըմբռնման եւ հարգանքի հիման վրա:*

Մինսկում անցկացված ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Եվրասիական տնտեսական միության գործընկերներին առաջարկեց համավարակի պայմաններում հանձնարարել հանձնաժողովին անդամ երկրների հետ համատեղ մշակել եւ ներկայացնել ԵԱՏՄ սննդի անվտանգության հայեցակարգ:

- Սննդի անվտանգության հետ կապված հարցերը միշտ եղել են մեր ուշադրության կենտրոնում, եւ, որքանով ես տեղյակ եմ, այս ուղղությամբ արդեն իսկ իրականացվել են որոշակի նախնական աշխատանքներ ԵԱՏՄ շրջանակներում: Ավելին, 2025 ռազմավարության մեջ մենք պայմանավորվեցինք մշակել «ԵԱՏՄ երկրների պարենային անվտանգության ընդհանուր սկզբունքներ եւ մոտեցումներ»: Սակայն համավարակի պայմաններում այս խնդրի լուծումը դարձել է հատկապես արդիական, ուստի, հարգելի գործընկերներ, առաջարկում եմ հանձնարարել Հանձնաժողովին երկրների հետ համատեղ մշակել եւ ներկայացնել են ԵԱՏՄ սննդի անվտանգության դոկտրինա (հայեցակարգ),- ասաց Փաշինյանը:




Վարչապետը հիշեցրեց նաեւ, որ Հայաստանը պատրաստակամություն է հայտնել եւ վերահաստատում է իր ցանկությունը՝ կազմակերպել Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական հանդիպումը Երեւանում 2020-ի տարվա հոկտեմբերին:

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ ԵՄ՝ ՈՉ ՄԻ ՍԱԴՐԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՉԻ ՄՆԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ռազմական գործողությունների վերսկսմամբ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը կրելու է տարածաշրջանային ապակայունացման անկանխատեսելի հետեւանքների ողջ պատասխանատվությունը: Խիստ մտահոգիչ է տարածաշրջանային անկայունություն հրահրելու Թուրքիայի գործելակերպը, որը լավագույնս արտացոլված է այդ երկրի արտաքին գործերի նախարարության պաշտոնական հայտարարությամբ, որտեղ վերջինս անվերապահ աջակցություն է հայտնում Ադրբեջանի գործողություններին՝ ակնհայտ եւ արդեն ավանդական դարձած հակահայկական տրամաբանությամբ:

Այս ռազմական միջադեպը չի առաջացել վակուումում: Արդեն տեւական ժամանակ է՝ Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է խաղարկել հակահայկական քարտը՝ ելնելով իրենց հայտնի դրդապատճառներից:

Հնարավոր է՝ գործ ունենք ներքին խնդիրները սահմանային իրավիճակի սրմամբ երկրորդ պլան մղելու Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության գործելաոճի հետ, որի համատեքստում աչքի է զարնում ակնհայտ քամահրական վերաբերմունքը մարդկային կյանքերի, այդ թվում՝ ադրբեջանցի զինվորների կյանքերի նկատմամբ, որն արտահայտվում է՝ նրանց ուղարկելով անհեռանկար գործողությունների:

Սրա մասին է վկայում նաեւ այն, որ Ադրբեջանն այդպես էլ չմիացավ համավարակի ժամանակ գլոբալ հրադադար հայտարարելու ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կոչին: Ստացվում է, որ որքան տարածվում է համավարակն Ադրբեջանում, որքան սրվում է սոցիալ-տնտեսական վիճակը, այնքան սրվում է Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության հակահայկական եւ ռազմատենչ հռետորաբանությունը:

Վստահեցնում եմ, որ որեւէ սադրիչ գործողություն անպատասխան չի մնում:

Նաեւ կոչ եմ անում մեր բոլոր հայրենակիցներին՝ իրենց անվերապահ զորակցությունը հայտնել մեր զինված ուժերին՝ զինվորներին, հրամանատարներին, ովքեր այս պահին ամուր կանգնած են հայրենիքի պաշտպանության դիրքերում: Նրանք պետք է ունենան ամուր թիկունք, եւ մեզնից յուրաքանչյուրն այդ թիկունքի մի մասնիկն է:

Կոչ եմ անում մեր հայրենակիցներին վստահել բացառապես պաշտոնական աղբյուրներին. այս շրջանում մեր հասարակության տեղեկատվական դիմակայությունը Հայոց բանակի հաղթանակի կարեւորագույն գրավականներից է,- հայտարարեց Հայաստանի վարչապետը:

*Ինչպես տեղեկացրել է Հայաստանի պաշտպանության նախարարությունը, Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողները հուլիսի 12-ին, ժամը 12:30-ի սահմաններում, ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենայով Տավուշի ուղղությամբ Հայաստանի պետական սահմանը խախտելու փորձ են կատարել: Հայկական կողմի նախազգուշացումից հետո, Ադրբեջանի զինծառայողները, թողնելով ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենան, վերադարձել են իրենց դիրքեր: Ժամը 13:45-ին Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողները կրկնել են հայկական զինված ուժերի սահմանային դիրքը գրավելու փորձը, կիրառելով հրետանային կրակ, սակայն ճնշվել են հայկական կողմից եւ, կորուստներ կրելով, հետ շպրտվել:*

*Զինված դիմակայությունը սկսվել է հուլիսի 12-ին, Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանին, Լեռնային Ղարաբաղից 300 կմ հեռավորության վրա: Հրետանային հրետակոծումները շարունակվել են հաջորդ օրերին: Վերջին տվյալներով, ադրբեջանական կողմից զոհվել է 17 մարդ, իսկ հայկական կողմից՝ չորսը: Կան վիրավորներ: Ադրբեջանական կողմի զոհվածների թվում կան երկու բարձրաստիճան սպան՝ գեներալ-մայոր Փոլադ Ղաշիմովը եւ գնդապետ Իլգար Միրզաեւը:*

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

- Ամերիկայի Միացյալ Նահանգները վրդովված է Կովկասում, Ադրբեջան-Հայաստան սահմանին, տեղի ունեցած դիմակայությամբ,- այս մասին հայտարարել է Միացյալ Նահանգների պետքարտուղար Մայք Պոմպեոն:

Ամերիկայի Միացյալ Նահանգները կոչ են անում կողմերին նստել բանակցությունների սեղանի շուրջ եւ լիցքաթափել իրավիճակը:

- Մեր խոր վիշտն ենք արտահայտում զոհվածների կապակցությամբ: Կողմերին կոչ ենք անում անհապաղ դադարեցնել կրակը եւ նստել բանակցությունների սեղանի շուրջ»,- հայտարարել է Մայք Պոմպեոն:

* * *

Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախումբը դատապարտում է հայ-ադրբեջանական սահմանին բռնությունը Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի մոտ եւ կոչ է անում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի աշխատակազմին՝ պատասխանատվության ենթարկել Ադրբեջանին: ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրանկ Փալոնը, կոնգրեսականներ Ջեկի Շփեյերը, Գուս Բիլիրակիսը, Ադամ Շիֆը նամակ են ուղարկել ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոյին, Պաշտպանության նախարար Մարկ Էսպերին, որում պահանջում են, որ ԱՄՆ-ը հորդորի Ադրբեջանին ընդունել միջազգային դիտորդների ներգրավումը եւ դուրս հանի հայ-ադրբեջանական ու արցախա-ադրբեջանական սահմանի երկայնքով դիպուկահարներին, ծանր եւ նոր տեսակի զենքերը:

* * *

Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Հայաստանին եւ Ադրբեջանին կոչ են անում, ջանքեր չխնայել իրավիճակը լիցքաթափելու համար եւ ձեռնպահ մնալ իրավիճակը սրող հռետորաբանությունից:

Համանախագահները հայտարարության մեջ ընդգծում են այնպիսի մթնոլորտի ստեղծման անհրաժեշտությունը, որը կնպաստի խաղաղարար գործընթացի վերսկսմանը:

* * *

Իրանի իշխանությունը պատրաստ է, Հայաստան-Ադրբեջանի լարվածությունը մեղմացնելու համար ստանձնել միջնորդի գործառույթը:

Իրանի արտաքին գործերի նախարարության հայտարարությամբ, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բախումների մեկնարկից, Իրանի դիվանագիտական ապարատը լարվածության մեղմացման նպատակով ակտիվացրել է աշխատանքը, քանի որ տարածաշրջանը չի կարող թույլ տալ եւս մեկ հակամարտություն:

Իրանի արտաքին գերատեսչությունը երկու կողմերին զսպվածություն դրսեւորելու կոչ է արել:

## ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ



***Հուլիսի 16-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում մասնակցեց հայ-ադրբեջանական սահմանագոտու հյուսիսարեւելյան հատվածում հակառակորդի արձակած կրակից զոհված մայոր Գարուշ Համբարձումյանի հուղարկավորության արարողությանը:***

## ՊԱՐԳԵՎՆԵՐ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

***Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ստորագրել է Հայաստանի պետական սահմանի Տավուշի հատվածի պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողներին հետմահու պարգեւատրելու վերաբերյալ Հայաստանի նախագահին ուղղված միջնորդությունը:***

***Միջնորդության մեջ նշված է, որ Հայաստանի պետական սահմանի Տավուշի հատվածի պաշտպանության ժամանակ զոհված մայոր Գարուշ Համբարձումյանը հետմահու պարգեւատրվում է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, կապիտան Սոս Էլբակյանը՝ Արիության մեդալով, կրտսեր սերժանտներ Սմբատ Գաբրիելյանը եւ Գրիշա Մաթեւոսյանը՝ Մարտական ծառայության մեդալներով:***

## ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ ԵՎՍ ՄԵԿ ԱՄՍՈՎ

***Հայաստանում «COVID-19»-ի տարածումը կանխելու նպատակով հայտարարված արտակարգ դրության ժամկետը, կառավարության որոշմամբ, երկարաձգվել է եւս մեկ ամսով: Երկրում արտակարգ դրությունը ուժի մեջ կլինի մինչեւ օգոստոսի 12-ի ժամը 17:00-ը:***

***Հիշեցնենք, որ Հայաստանում արտակարգ դրությունը առաջին անգամ հայտարարվել էր մարտի 16-ին, այնուհետեւ՝ երկարաձգվել երեք անգամ:***

## ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏՆԵՐ՝ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՀԱՋՈՐԴ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՄԱՐ

***2020 թ. հուլիսի 1-ից երրորդ եւ հաջորդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարվելու է ամբողջությամբ: Նախկինում գործող կարգի համաձայն, 3-րդ եւ 4-րդ երեխայի ծննդյան դեպքում 500.000 դրամը վճարվում էր միանգամից, իսկ մնացած 500.000 դրամը կամ 1.000.000 դրամը՝ 5-րդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում, փոխանցվում էր նոր ծնված երեխայի անվամբ բացված բանկային հաշվին՝ որպես ընտանեկան դրամագլուխ:***

***Հավելենք, որ մինչեւ 2020թ. հուլիսի 1-ը ծնված երեխաներին նախատեսված դրամագլխային գումարները, որոնք արդեն փոխանցվել են բանկային հաշվին, ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից դիմում ներկայացվելու դեպքում, կարող են տնօրինվել միանվագ: Դիմումի համաձայն, քաղաքացիներին կտրամադրվի հաշվին առկա ողջ գումարը:***

***Հիշեցնենք, որ 2020թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո ընտանիքում առաջին եւ երկրորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը բարձրացել է մի դեպքում 6 անգամ, մյուս դեպքում՝ կրկնակի: Սա նշանակում է, որ առաջին եւ երկրորդ երեխայի ծննդյան դեպքում կվճարվի 300 հազար դրամ, նախկինում վճարվող 50 եւ 150 հազար դրամների փոխարեն»,- ասված է նախարարության տարածած հաղորդագրության մեջ:***

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒԼԻՍ



*19.07.2020 Վարդավառ: Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*

Քրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է, եւ Պետրոս, Հովհաննես եւ Հակոբոս առաքյալների առջեւ Քրիստոսի այլակերպության հիշատակը, որը, ըստ ավանդության, տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա:

Հայ եկեղեցին Քրիստոսի Պայծառակերպությունը տոնում է Զատիկից 98 օր հետո, հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հայաստանյայց եկեղեցին այն կոչում է նաեւ Այլակերպության տոն կամ Վարդավառ: Վերջինս հին հայկական տոնի անվանումն ունի, որից պահպանվել է նաեւ միմյանց վրա ջուր ցողելու սովորույթը: Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթի օրը մեռելոց է:

*23.07.2020 Եսայի մարգարեի հիշատակության օր*

*25.07.2020 Սուրբ Թադեոս առաքյալի եւ Սուրբ Սանդուխտ կույսի հիշատակության օր*

## ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

# ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է ՏԱՐԱԾՔԻ ԱՂՏՈՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ



***Վրաստանի փողոցներում, տրանսպորտում, բակերում եւ այլ վայրերում աղբ թափելու համար սահմանված տուգանքները կրկնապատկվել են:***

Թափոնների կառավարման օրենսգրքում փոփոխությունները Վրաստանի խորհրդարանի կողմից ընդունվեցին հուլիսի 13-ին: Ըստ փոփոխությունների, մինչեւ 2 կգ աղբ նետելու դեպքում, անձը կտուգանվի 200 լարիով, 100-ի փոխարեն: Եթե աղբը նետեք անձնական մեքենայից, կտուգանվի վարորդը, հանրային տրանսպորտի դեպքում՝ դուք: Երկու դեպքում էլ տուգանքը կկազմի 250 լարի, 120 լարիի փոխարեն:

Երկու կամ ավելի կգ աղբով շրջակա միջավայրն աղտոտելու համար, ֆիզիկական անձը կտուգանվի 500 լարիով, նախկին 150 լարիի փոխարեն, իրավաբանական անձը՝ 1500 լարի, 1000-ի փոխարեն:

Շան կղանքը չմաքրելու համար սահմանված է 100 լարիի չափով տուգանք:

Շրջակա միջավայրը մինչեւ հինգ անվադողով աղտոտելու համար սահմանված է տուգանք՝ 500 լարիի, 150-ի փոխարեն, իսկ 5 անվադողից ավելիի դեպքում՝ 2000 լարի, 500-ի փոխարեն:

4 անգամ աճել է մեծ ծավալների թափոնով միջավայրն աղտոտելու (օրինակ՝ տրանսպորտային միջոց) տուգանքը. այս դեպքում ֆիզիկական անձը կտուգանվի 2000, իսկ իրավաբանականը՝ 6000 լարիով:

## ԺԱՄԱՆՑԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

# ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՈՒ ԿԱՌՈՒՑԱԾ ԴԵՆԴՐՈՊԱՐԿՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻՆ

***Հուլիսի 15-ին բացվեց եւ առաջին այցելուներին ընդունեց Շեկվեթիլիի դենդրոպարկը:***



Արհեստական աճեցված այգում մասնագետները երեք տարվա ընթացքում փորձեցին ստեղծել նախնական ձեւով բնական տարածք: Շուրջ 60 հեկտար տարածք զբաղեցնող հանգստյան գոտին գտնվում է Օզուրգեթիի մունիցիպալիտետում, Ծվերմաղալիի եւ Շեկվեթիլիի միջեւ: Մասնագետների համոզմամբ, տեղանքն իր աշխարհագրական դիրքով իդեալական է նման մտահղացման մարմնավորման համար:

Շեկվեթիլիի դենդրոպարկում 18 հեկտար տարածքի վրա երկրի տարբեր անկյուններից տեղափոխվել է 29 բացառիկ տեսակի ավելի քան 200 հսկայական ծառ:

Այգու տարածքում ապրում է աշխարհի բոլոր մայրցամաքներից 58 անուն թռչուն, որոնց մեծ մասը ընդգրկված են Կարմիր գրքում:

Այգու բուսական եւ կենդանական աշխարհի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է տարածքի տարբեր մասերում տեղադրված վահանակներին:

Նշենք, որ դենդրոպարկի շինարարությունը, Բիձինա Իվանիշվիլու նախաձեռնությամբ, սկսվեց 2017 թվականին:

## ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# 20 ՏԱՐԻ ԴԱԴԱՐԻՑ ՀԵՏՈ, «ԿՐԻԱՅԻ» ԼՃԻ ՃՈՊԱՆՈՒՂԻՆ ՎԵՐՍԿՍԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ



***Թբիլիսիի քաղաքապետարանի հայտարարությամբ, համավարակով պայմանավորված սահմանափակումները, չեղարկվեց նաեւ «Կրիայի» լճի ճոպանուղու պարագայում: Ճոպանուղին հուլիսի 11-ից ուղեւորներին սպասարկում է սովորական ռեժիմով:***

«Ճոպանուղուց օգտվելու պահին, որպեսզի ուղեւորները պահպանեն անվտանգության կանոնները, մասնավորապես, յուրաքանչյուր ուղեւոր պետք է օգտագործի պաշտպանիչ դիմակ եւ պահպանի սոցիալական հեռավորություն: Յուրաքանչյուր վագոնում միաժամանակ թույլատրվում է միայն 4 ուղեւորի եւ մեկ ուղեկցորդի տեղափոխում»,- նշված է քաղաքապետարանի հայտարարության մեջ:

Ըստ քաղաքապետարանի, կրկին ուժի մեջ է մնում Ռիղե-Նարիղալա ճոպանուղու սահմանափակումը:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Անգլիացի գրող ... Բրոնտե: 5.Ցնորք, խաբեություն, պատրանք: 8.Շալվար, անդրավարտիք: 9.Տարտու քաղաքը հնում: 11.Այժմ, հիմա: 12.Երկրաչափական մարմին: 14.Չթաղված, չհուղարկավորված: 16.Հայտնի քաղաք Նիդերլանդներում: 18.Ցուցական դերանուն: 19.Ջրալի, հորդառատ: 20.... պահել, ամեն ինչ չուտել: 22...զարդ, ...կալ: 23.Հայոց ամսանուն: 24.Լուսաբաց, արեւագալ: 26.Ասորեստանի մայրաքաղաքը: 27.Գեւորգ Էմինի գովերգած գյուղը: 29.... ու կոծ: 31.Որսի կենդանի: 32.Սմբակավոր կենդանի: 34.Դանիացի ֆիզիկոս: 37.Փողոցի «երեսը»: 39.Ստորադասական շաղկապ: 40.Գինի խմելու աման: 41.Միանիշ թիվ: 42.Աներոջ որդին: 43.Ա..., մաս..., վայ...: 44.Մեսրոպյան այբուբենի չորրորդ զինվորը: 45.Ե՛վ Սարգսյանը, ե՛ւ Ջանիբեկյանը: 47.Հայկական կոնյակ: 51.Մաշտոցյան այբուբենի տառ: 53.Երեւանի նախկին քաղաքապետ ... Սիրադեղյան: 54.Ֆրանսիացի նշանավոր ֆիզիկոս: 55.Հայկ Բժշկյանի կեղծանունը: 56.Իգական անուն: 58.Րաֆֆու հերոսուհի: 59.Տառիկի թելաստեղծ գործիքը: 50.Հարգել, պատվի արժանացնել:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2. Մեծ Բրիտանիայի մաս պետություն: 2.Բերդ-ամրոց Ախալցիխե քաղաքում: 3.Հարցական դերանուն: 4.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 5.Գերմանացի գրող Ֆրիդրիխ Շիլլերի «Սեր եւ ...» ստեղծագործությունը: 6.Բնակվելու վայր, տուն, մասնաշենք: 7.Վրաց դերասանուհի ... Վաչնաձե: 10.Հացահատիկի խուրձ, փունջ: 12.Ստեղծել, շինել: 13.Հայ հանրահայտ դերասանուհի Գալյա ...: 15.Հայոց ամենախելացի արքան: 17.Հացաբույսի տեսակ: 21.Այս, այդ, ...: 25.Հռիփսիմյան կույսերից: 27.«Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմի հերոս ... Ղամբարյան: 28.Հայ մեծանուն նկարիչ Հարություն ...: 30.Հանրահայտ դերասան, ում անունով կոչվում է Թբիլիսիի պետհայդրաման: 33.Կտրեմ, կտրես, ...: 34.Ֆրանսիական քաղաք: 35.Հայկական կարմիրը: 36.Վրաց անվանի դերասանուհի ...: 38.Ֆիրդուսուն անվանել են այդտեղի բլբուլ: 46.Գայլերի խումբը: 47.Եկեղեցական համալիր Սյունիքում: 48.Թաղամաս Երեւանում: 49.Առաջին մարդասպանը: 50.Հերոսուհի Ստ.Զորյանի «Խնձորի այգին» ստեղծագործությունում: 52.Ժայռի ամենաբարձր մասը: 54.Հայաստանի մայրաքաղաքներից: 57.Վառ կարմիր գույն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Նայադ: 9.Ենիչերի: 10.Խաթր: 11.Խառատ: 12.Այսպիսի: 15.Տայմ: 16.Երկուս: 17.Սուսեր: 19.Սկուբի: 21.Մարդ: 24.Վեզուվ: 25.Ամբարել: 27.Մեղր: 28.Լեկ: 30.Կաղամբ: 34.Քուռ: 35.Նավատորմ: 38.Դու: 39.Անարար: 41.Շիկնել: 44.Գահ: 45.Տարտամ: 46.Դարպաս: 48.Թութակ: 49.Եթե: 50.Մանդատ: 51.Լեգրան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Քառասուներեք: 2.Նախատեսում: 3.Շերամ: 4.Գիպսե: 5.Բենիկ: 6.Ուիլիս: 8.Դատարկվել: 13.Պրիմա: 14.Սուկրե: 18.Գիմ: 20.Բարկա: 22.Արամո: 23.Դլե: 26.Բուղա: 29.Կուսակրոն: 31.Ավիշ: 32.Ատակ: 33.Բրդե: 35.Նորամուտ: 36.Մուլասեն: 37.Պաշտում: 40.Ազաթա: 42.Իթակե: 43.Նեպեր: 46.Դալ: 47.Աթա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445